C4000024

# MODERN ARMENIAN
## (Second Language)

***Maximum Marks : 80***

***Time Allowed : Three Hours***

1. *Answers to this Paper must be written on the paper provided separately.*
2. *You will **not** be allowed to write during the first **15** minutes.*
3. *This time is to be spent in reading the question paper.*
4. ***The time given at the head of this Paper is the time allowed for writing the answers.***

5. *Attempt **all** questions.*
6. *The intended marks for questions or parts of questions are given in brackets [ ].*

***Instruction for the Supervising Examiner***

*Kindly read aloud the instructions given above to all the candidates present in the Examination Hall.*

This Paper consists of 7 printed pages and 1 blank page.



© Copyright reserved.

### Question 1

Write a short composition in **Modern Armenian** in about **200** words any **ONE** of the following topics :— [15]

*Գրել շարադրություն տրված թեմաներից որևէ մեկով:*

(i) *Եթե հրաշագործ լինեի*

*Կախարդական փայտիկ-անհավանական դեպքեր-իրականացած երազանք-մտքի թռիչք-չբացահայտված մոլորակ:*

(ii) *Ես եմ տերը իմ երկրի*

*Երկիր հայրենի-բզկտված հայրենիք-կրթված քաղաքացի-հայրենասիրությունը սկսվում է իմ տնից-երազանքների երկիր:*

(iii) *Սովորել ապրել*

*Տնից հեռու- ինքնուրույն կյանք-մտերիմ ընկերներ-անհատականություն-կյանքի դասեր:*

(iv) *Մեր լեզուն մեր զենքն է*

*Ազգային գոյություն-կախարդական բանալի-ժառանգություն-պատմություն-ճոխ գանձարան:*

### Question 2

Write a letter in **Modern Armenian** in approximately **120** words on any **ONE** of the following topics :— [15]

*Գրել նամակ տրված թեմաներից որևէ մեկով:*

(i) *Նամակ ճեմարանի տեսչին*

*Հոգեշնորհ հայր սուրբ- կրթության բարձր որակ-ճեմարանն իմ տունն է-երախտագիտության զգացում- անմոռանալի հուշեր:*

(ii) *Նամակ ԿԳՄՍ նախարարին*

*Կրթություն օտար երկրում-Հայաստան-սփյուռք-նոր փորձություններ-համագործակցություն-նոր բարձունքներ նվաճել:*

**Question 3**

[10]

Read the passage and answer the question in **Modern Armenian** :—

(i) *Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին:*

*Ես աչք ու դու լոյս, հոգի,*
*առանց լո՛յս՝ աչքըն խաւարի.*
*Ես ձուկ ու դու ջուր, հոգի,*
*առանց ջո՛ւր՝ ձուկըն մեռանի.*
*Երբ զձուկն ի ջըրէն հանեն*
*ւ'ի այլ ջուր ձըգեն, նայ ապրի,*
*Երբ զիս ի քենէ զատեն,*
*քան զմեռնելն այլ ճար չի լինի:*

(a) *Ո՞վ է նշված տողերի հեղինակը:*

(b) *Ի՞նչ ժանրի ստեղծագործություն է, կարճ գրել ստեղծագործության նկարագրությունը:*

(c) *Ո՞ր դարում է ստեղծագործել տողերի հեղինակը:*

(d) *Ի՞նչ մոտիվով է գրված ստեղծագործությունը:*

(e) *Ի՞նչ լեզվով է գրված ստեղծագործությունը:*

(ii) *Կարդալ տեքստը և պատասխանել հարցերին:* [10]

*Բարիկենդան էր: Ձինն էկել, դիզվել, սար ու ձոր բռնել էր: Պարզըկա գիշերը է՛նպես էր գետինը սառցրել, որ ամեն մեկ ոտը կոխելիս հազար տեղից տրաքտրաքում, ճռճռում, ճքճքում էր ու մարդի ջանը սրսռացնում, ձեն տալիս: Ամեն մեկ ծառի ճղքներից, ամեն մեկ տան բաշից հազար տեսակ սառցի լուլա, հազար տեսակ ձնի քուլա կախ էր էլել ու բիզ-բիզ իրար վրա սառել: Հենց գիտես՝ սար ու ձոր կամ նո՛ր էր ծաղկել, կամ նո՛ր ծերացել, մահվան դուռն ընկել՝ շունչն էր մնացել, որ տա ու աշխարքիս բարով մնա ասի:*

(a) *Ո՞վ է նշված տողերի հեղինակը:*

(b) *Ո՞ր ստեղծագործությունից է մեջբերված հատվածը:*

(c) *Ի՞նչ լեզվով է գրված:*

(d) *Պատմական ո՞ր դեպքերն են ընկած ստեղծագործության հիմքում:*

(e) *Ո՞վ է այդ ստեղծագործության գլխավոր հերոսը:*

## Question 4

Answer the following questions according to the instructions given :— [10]

***Տարբերակներից ընտրել տվյալ նախադասության մեջին համապատասխանող ճիշտ հոմանիշ բառը:***

(i) ***Իր ... առօրյան ձանձրացրել էր նրան:***

(a) *միալար*

(b) *միապաղաղ*

(c) *միօրինակ*

(d) *միաձև*

(ii) ***Գիշերվա այդ ուշ ժամին բոլորը քնած էին, և գյուղի փողոցները ... էին:***

(a) *անմարդաբնակ*

(b) *խոպան*

(c) *ամայի*

(d) *անկենդան*

(iii) Նոր հրատարակված գրքում շատ փաստեր խեղաթյուրված էին, ուստի մասնագետները բազում հոդվածներով այդ գիրքը ... :

(a) հանդիմանեցին

(b) քննադատեցին

(c) պախարակեցին

(d) պարսավեցին

(iv) Վերքից արյունը ... աղբյուրի պես:

(a) հոսում է

(b) հորդում է

(c) բխում է

(d) դուրս է գալիս

(v) Խնձորը կճպում, կտրտում, թելի վրա շարում են և ... թոնրի մեջ կախում, չորացնում:

(a) զով

(b) հով

(c) հովաշունչ

(d) զովասուն

(vi) Հոմերոսը թագավորներին կոչում է ժողովրդի ... :

(a) հոտաղներ

(b) գառնարածներ

(c) հովիվներ

(d) նախրապան

(vii) ***Զանազան երևույթներ ... էին համարում հին ժամանակ, երբ ժողովուրդը տգետ էր և երևույթների պատճառը չէր կարող հասկանալ:***

(a) *հրաշքներ*

(b) *հրաշափառություններ*

(c) *հրաշագործություն*

(d) *սքանչելիք*

(viii) ***Ծաղրուծանակից ... հեռացավ ու որոշեց այդ մասին էլ ոչ մեկի հետ չխոսել:***

(a) *խոցված*

(b) *վշտացած*

(c) *վիրավորված*

(d) *թշնամացած*

(ix) ***Մեջքը ... ծանրությունից:***

(a) *կորացել էր*

(b) *խոնարհվել էր*

(c) *թեքվել էր*

(d) *ծռվել էր*

(x) ***Ծերացած էր, բայց դեռ երիտասարդական ... ուներ:***

(a) *ուժ*

(b) *կորով*

(c) *ջիղ*

(d) *ազդեցություն*

## Question 5

(i) Translate the following passage into **English** :— [10]

***Տրված տեքստը թարգմանել անգլերեն:***

*Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է և պատմական Հայաստանի տասներկուերորդ մայրաքաղաքը, որն աշխարհի հնագույն բնակավայրերից ու շարունակաբար բնակեցվող հին քաղաքներից մեկն է: Այն տեղակայված է Հրազդան գետի ափին և հանդիսանում է երկրի վարչական, մշակութային և տնտեսական կենտրոնը:*

*Երևանը Ք.ա. 782 թվականին Արարատյան դաշտավայրում հիմնադրել է Արգիշտի Առաջին արքան և կոչել Էրեբունի, որի հնչյունափոխությունից էլ առաջացել է Երևան անունը:*

*Երևանի բուն պատմությունը սկսվում է Էրեբունի ամրոցի հիմնադրմամբ: Էրեբունին կառուցելու համար Արգիշտի Առաջինը խեթերի երկրից ու Ծոփքից բերում է 6600 ռազմագերի, որոնք բլրի վրա բարձրացնում են կոփածո պարիսպներ, տաճարներ ու պալատներ, տներ ու զորանոցներ: Հայ մատենագրության մեջ Երևանն առաջին անգամ հիշատակվում է 7-րդ դարի սկզբին «Գիրք թղթոց»-ում:*

(ii) Translate the following passage into **Modern Armenian** :— [10]

***Տրված տեքստը թարգմանել հայերեն:***

The art section of Cultural Historical Museum of Yerevan opened in 1921. It was the core of the future art gallery. In 1936 it was recognized as the museum of fine arts and in 1947 it became the State art gallery of Armenia. The collection of the Gallery numbers more than 20,000 works of art. There are paintings by Italian, Flemish, Dutch, Spanish, French and other artists displayed in the halls of Western European art. Tintoretto, Julio Karpioni, Cornelis de Vos, Courbet and Lancre are only a few from a great number of artists whose works are displayed in the Gallery's exposition. The collection of Russian art is represented by works of such artists as Brullov, Rokotov, Borovikovski, Levinski, Troponin, Serov, Surikov, Repin and others. The section of Armenian art includes different branches of national art, graphics and sculpture. It has rich collections of works by Ayvazovski, Shahin, Saryan, Yakulov, Gyourjian, Fetfadjian, Kojoyan and many others.